

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա/ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2014 թվականի միջոցառումների մարզային ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին», «Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2014 թվականի մարզային ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին » , « Ընտանիքի տարվա ընթացքում մարզում կատարված միջոցառումների մասին » հաշվետվությունները:

բ/ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն է ներկայացվել «Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման 2015 թվականի մարզային ծրագիրը »:

գ /Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ և Հելսինկյան Քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ է ներկայացվել երեխաների պաշտպանության ոլորտում 2014 թվականին կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն:

2. ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ա/ Ոստիկանության տարածքային բաժինների անչափահասների գործերով տեսուչների հետ համատեղ մարզի դպրոցներում կազմակերպվել է դասախոսություն «Անչափահասը և հանցագործությունը » թեմայով:

բ/«Ընտանիք, ընտանեկան ավանդույթներ» խորագրով դասախոսություն է կարդացվել մարզային գրադարանում նվիրված, «Ընտանիքի տարվան» Եղեգնաձորի քոլեջի և գրադարանի աշխատողների մասնակցությամբ, իսկ Վայքի ավագ դպրոցի ավագ դասարանների աշակերտների համար զեկուցում՝ « Երեխայի իրավունքները » թեմայով:

գ/Կանանց իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներով զեկուցում է կարդացվել Վերնաշենի դպրոցում «Կինը քաղաքականության մեջ» թեմայով:

3. ԵՐԵՄԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ա/ Իրականացվել է որդեգրման գործընթաց՝ Գնդեվագ գյուղի բնակչի դիմումի հիման վրա, կազմվել է անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ՝ ՀՀ ԱՍՀ նախարարություն

ներկայացնելու, դիմողին որպես որդեգրողի թեկնածու կենտրոնացված հաշվառման վերցնելու համար:

բ/ Մանկատնից կենսաբանական ընտանիք է վերադարձվել մեկ երեխա, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 5 երեխաների տրվել է վկայագիր ներառական և հատուկ կրթություն ստանալու համար:

գ/ Մարզում արձանագրվել է անչափահասի կողմից իրավախախտման 2 դեպք, համապատասխան դպրոցի տնօրեններին ուղարկվել է գրավոր հանձնարարություն՝ նրանց հետ նպատակային աշխատանք տանելու համար:

4. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ա/ Մալիշկայի համայնքի 4 դպրոցահասակ երեխաների վիճակի ուսումնասիրություն, տուն այցերի կազմակերպում:

բ/ Ամուսնալուծությունների հետևանքով << Ընտանեկան օրենսգրքի >> 54-րդ հոդվածի հիմքերով երեխաների դատտիրակությանը երեխայի հետ չապրող ծնողի իրավունքների ապահովում /Ռինդ, Թառարումբ, Եղեգնաձոր/:

գ/ Ծնողական իրավունքների վերականգնում, խնամակալության տակ գտնվող 3 երեխաների վերադարձ ծնողին /Շատինի համայնք/:

դ/ Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 5 երեխաների կարիքի գնահատում և Նորք տեղեկատվական համակարգում մուտքագրում:

ե/ 6 և ավելի երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ստեղծում և Խաչիկ գյուղի բնակիչ, 8 երեխաների ծնող Ծաղիկ Գրիգորյանին << Ծնողական փառքի մեղալուծ >> պարզևատրման ներկայացում:

5. Մասնակցություն վարչական հսկողության իրականացմանը մարզի 3 համայնքներում:

6. Սերս և Բարձրունի համայնքներում քաղաքացիների դիմումների հիման վրա խնամակալության հանձնաժողովների նիստերի հրավիրում, դատարանի կողմից անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ խնամակալության սահմանում:

Բաժնի պետ

 Գ. Բախանյան

02.04.2015թ